

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Է. Բ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայերենի կետադրության պատմությունը շատ հին անցյալ ունի, բայց շնայած հայերենագիտության բուռն զարգացմանը, այժմ չի ուսումնասիրված, և չկա որևէ մի աշխատություն, որի միջոցով կարողանայինք ծանոթանալ կետադրության այժմյան վիճակի սկզբնավորման ու մեր լեզվի պատմության տարբեր շրջաններում կետադրության փոփոխությունների, զարգացման ու կանոնավորման ողջ ընթացքին։ Մեր այս հոդվածի նյութն է հայերենի կետադրության վիճակի, նենթությունը 1890—1920-ական թվականներին և Հ. Խումանյանի կիրառած .կետադրության սկզբունքների բացահայտումը՝ նրա դրական ողջ կյանքի ընթացքում։

90-ական թվականներից սկսվում է մեր լեզվի պատմական զարգացման նոր շրջանը, որ տևում է մինչև 1921 թվականը։

Հիշյալ շրջանում հայոց լեզվի ուղղագրության, սրա հետ նաև կետադրության գիտական մշակումն ու կանոնավորումը դեռևս իր ավարտին չէր հասել։ Պետականության, ինչպես նաև մշակութային ընդհանրացնող կենտրոնի բացակայությունը հնարավորություն չէր տալիս մշակելու ուղղագրության և կետադրության միասնական նորմաներ։ Ընդհակառակը, մեր մտավորականներն ու առանձին լեզվագետները, գործելով տարբեր կենտրոններում և դպրոցներում միմյանցից անկախ, երբեմն որդեգրում էին ուղղագրության ու կետադրության հակոտնյա սկզբունքներ։ Ավելին, շատ դպրոցներ և մամուլի օրգաններ խորշում էին այդպիսի սկզբունքներից։

Արևելահայերեն գրական լեզվի ուղղագրության ու կետադրության կանոնների գիտական մշակման ու կանոնավորման գործով փաստորեն առաջինն սկսեց զբաղվել Խոս. Պալասանյանը դեռևս 70-ական թվականներից։ Բայց խնդիրն այն է, որ լեզվի ուղղագրության ու կետադրության վերջնական մշակումն ու կանոնավորումը, առանց ղեկավար կենտրոնի, մի մարդու գործ չէր, եթե նույնիսկ այդ մարդը ամենահմուտ մասնագետը լիներ, որովհետև մեր նոր գրական լեզուն դեռևս իր զարգացման խանձարուրի մեջ էր։ Դեռևս չէին մշակված պարզ ու բարդ նախադասության հիմնական տիպերը, շաղկապների կիրառման այսօրվա կուռ համակարգը, շարադասությունը, բազմազան որոշիչների գործադրության կարգը, բացահայտիչ բացահայտյալների ներկայիս սերտ կապվածությունը և կետադրության համար շատ կարևոր՝ մեր լեզվի շարահյուսության մշակման բազմաթիվ ու բազմազան երևույթներ։ Այս էր պատճառը, որ Պալասանյանը չկարողացավ մեր լեզվի ուղղագրության ու կետադրության կայուն նորմաներ մշակել։

Հետագա սերունդը պետք է լրացներ այդ բացը։ Եվ ահա 90-ական թվականներին հանդես է գալիս հայ լեզվաբաններից թերևս ամենահմուտը, որ իրեն նվիրում է մեր գրական լեզվի գիտական ուսումնասիրության մեծ ու պատվավոր գործին։ Դա Մ. Արեղյանն էր, որն իր գիտական գործունեության ամենավաղ շրջանում սկսեց զբաղվել նաև հայերենի ուղղագրության ու կետադրության հարցերով։ «Հայոց լեզվի ուղղագրությունը» աշխատության մեջ, որ լույս է տեսել 1892 թ., նա գրում է. «Գրեթե ամենայն մարդ իր առանձին ուղղագրությունն ունի և անգամ առանց որևէ հիմունքի, ինչպես պատահում է, գրում է, դրա համար և մեր ուղղագրության մեջ տիրում է բազմատեսակություն, մինչդեռ լեզվի գրության մեջ գրության միատեսակությունը անհրաժեշտ է» (էջ 3)։

Ճիշտ այսպիսի վիճակումն էր նաև կետադրությունը։

Անուրանալի է, որ Պալասանյանը «Քերականություն մայրենի լեզվի» աշխատության մեջ մեր լեզվի կետադրության համար որոշ գիտական սկզբունքներ մշակեց, ու մի շարք անկանոնություններ կանոնավորվեցին։ Այսօր էլ ընդունելի շատ կանոններ գիտական ձևակերպում են ստացել ու քերականության դասագրքերում տեղ գրավել շնորհիվ Մանուկ Արեղյանի ջանքերի։

Բայց որքան էլ Արեղյանի մշակած կետադրության օրենքներն ու կանոնները ճիշտ ու ստույգ լինեին, այնուամենայնիվ շատ էր դժվար ու գրեթե անհնարին դրանք ընդհանրորեն պարտադիր դարձնել, որովհետև, ինչպես ասացինք, մեր գրողներից շատերը կամ թերավարժ էին հայոց լեզվի քերականության մեջ՝ չունենալով պարբերական ու լրիվ հայկական կրթություն, կամ էլ

իրենց ուսումնական ստացած լինելով օտար միջավայրում՝ ենթարկվում էին օտար լեզվի քերականական կանոններին. վերջապես՝ չկային հայոց լեզվի միասնական դասագրքեր:

Մեր կիտաղրության պատմության համար չափազանց հետաքրքրական է 90—920-ական թթ. շրջանը՝ իր անհատական կամայականությունների հետևանքով առաջացած կիտաղրական կանոնների կիրառության բազմադասություններ:

Հովհաննես Թումանյանի դրվածքների կիտաղրության ուսումնասիրությունը պարզում է հայերենի կիտաղրության այդ ժամանակաշրջանի ընդհանուր վիճակը մի կողմից և Թումանյանի դրվածքների կիտաղրության յուրահատկությունները մյուս կողմից:

Ըստ Արեգյանի մշակած կիտաղրական կանոնների՝ բարդ ստորադասական նախադասության գլխավոր և երկրորդական նախադասությունները միմյանցից անջատվում են ստորակետով, բայց եթե գլխավոր ու երկրորդական նախադասությունները հակիրճ են, ապա թե-ով կապակցվող երկրորդական նախադասությունը գլխավորի հետ միանում է առանց որևէ կետի: Արեգյանի այս կանոնը հենվում էր ո՛չ թե քերականության օրինաչափության, այլ ոճաբանական սկզբունքների վրա, որ տվյալ դեպքում հակասության մեջ էր քերականական կանոնի հետ:

Քերականորեն տարբերություն չկա ընդարձակ ու համառոտ նախադասությունների միջև, դրանք բարդ նախադասության կազմում հանդես են գալիս միևնույն շարահյուսական հարաբերություններով, իսկ ոճաբանորեն իսկապես դրանք տարբերվում են: Եվ Թումանյանը իրրև ժողովրդական հակիրճ խոսքի մեծ վարպետ, չէր կարող ժողովրդական հակիրճ և դրական ծավալուն ու բարդացված այդպիսի տարբերակման քերականական կանոնները չընկալել ու գործադրության մեջ չդնել:

Հարևանները զարմանում են, չեն հասկանում քե ուրեղից է սա էսպես հաբուստ ապրում: Չպարծենա երբեք ոչ ոք քե ինքն անհաղթ մի բան է չոկ: Կեցա իրեն մոռ պատմեց քե իրեն հետ ինչ պատահեց: Չուզեց լսել մինչև անգամ քե իրենից ուժեղ հսկա էս աշխարհում ուրիշը կա: Այս բոլոր օրինակները բերված են Հովհաննես Թումանյանի նախահեղափոխական շրջանի հրատարակություններից:

Այս տիպի նախադասությունների կիտաղրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տվյալ դեպքում Թումանյանը ոչ այնքան հետևել է Արեգյանի վերևում հիշատակված կանոնին, որքան նկատի է առել գրական ու ժողովրդական խոսքի հանգամանքները: Բայց երբ Թումանյանն ինքն է գրում կամ գրական խոսք է մշակում, չի հետևում վերոհիշյալ կանոնին, որոշակի կերպով երկրորդական նախադասությունը տրոհում է ստորակետով. օրինակ՝ Իմ հոգին մենակ այն էր գրավում, քե ինչպես էին շարժվում բուբոնիկ բերքիկները քաղաքում շրթանց: Թագուհու ազնվությունից ու հարցմունքից ոգևորված, Իվանան սրտաբաց պատմում է մի առ մի, քե ով է ինքր, ինչ է եկել իր գլուխը և ինչպես է հասել Ոսկե փառք:

Մեր այս դիտողությունը հաստատվում է նաև նրանով, որ կիտաղրության այս կանոնը վերաբերում է նաև ուր շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությանը: Ժիշտ է, ուր շաղկապով կապակցվող նախադասությունները առանց տրոհման են մնում ոչ այնքան հաճախականությամբ, ինչպես որ թե-ով կապակցվող այդ տիպի նախադասությունները: Օրինակ՝ Մի անգամ էլ Կուրմիրիք երբ ուր ի՞նչ տատի համար քիսված է եղել տալեկիս. մի ուրիշ գել է ուզեցել նրան համոզի: Իրիկունը ուր ընկնում է, պառավները խոսք են բաց անում. քե իրենց տուն գնալու ժամանակն է: Թագավորի տղեն ու տեսնում է, իսկույն դեմն է գալիս, ձեռքը բռնում է. հետը պար է գալիս: Այս դեպքում ևս պետք է նկատել, որ նման տիպի երկրորդական նախադասությունները միջադաս լինելով՝ այնպես են ձուլված գլխավոր նախադասության հետ, որ երկու նախադասությունները մի համաձուլյի տպավորություն են գործում, և ոճաբանորեն այդպիսի սերտությունը կապված է դարձյալ ժողովրդական խոսք-արվեստի հետ: Կապակցման այս սերտությունը արտահայտվում է նաև շարահյուսական այլ կառուցվածքներում, իսկ Թումանյանի յեզվա-շարահյուսական նուրբ ընկալումով այդպիսի կառույցները իմաստային ամբողջություն են կազմում և հենց այդ պատճառով էլ գրողը դրանք թողնում է առանց տրոհության: Իրրև օրինակ վերցնենք մի քանի հակիրճ խնդիր երկրորդական նախադասություններ ունեցող բարդ ստորադասական նախադասություններ, ուր երկրորդական անշաղկապ նախադասությունները թե՛ կապակցորեն, թե՛ արտաբերությամբ և թե՛ իմաստով այնպես են ձուլված ժողովրդական խոսքարվեստում, որ Թումանյանը այդպիսի բարդ նախադասությունները դիտում է իրրև սերտ համաձուլյ կառույցներ և չի տրոհում:

Մի հաբուստ մաղու կին հիվանդանում է: Տեսնում է մահը մոտենում է: Էս ասելն է լինում. մին էլ էն է տեսնում խոճանցի լուսամուտից երկու ճեմակ աղավնի ներս ընկան: Տեսնում են սուլվելու պառավի տնակի շուրս կողմը բռնած, գլուխները քեռի տակ կոխած քեռն:

Թումանյանի կենտադրական այս սկզբունքը առավել հետևողականորեն արտահայտվում է եղանակավորիչ բայ-ստորոգյալների հետ կապված երկրորդական նախադասությունների կապակցման մեջ: Այստեղ արդեն եղանակավորիչ բայ-ստորոգյալները իրենցից կախված երկրորդական նախադասությունների հետ դիտվում են իբրև առավել միասնական ամբողջություններ և են տրոհվում: Օրինակ՝ Հենց իմանաս մեջը հուրի-փեհներ էին ապրում, որ չգիտեն աղբն ու փոշին ինչ բան է: Ուզում է ծառի վրա գիշերի: Ով ուզում է հաց ուտի, պետք է աշխատի: Մոխրոտն ուզում է զնն. լազավորի տղեն էլ ուզում է ուղեկցի:

Ժողովրդական խոսքի այսօրինակ կառուցվածքները ճիշտ և ճիշտ համապատասխանում են զրական լեզվի եղանակավորիչ բայերի ու անորոշ դերբայների այնպիսի կապակցություններին, որոնք մի ստորոգյալ են կազմում և, բնականաբար, չեն կարող տրոհվել: Սակայն ժողովրդական խոսքի մեջ եղանակավորիչ բայը և հաջորդող դիմավոր կախյալ նախադասությունը դեռևս որոշ անկախություն են ներկայացնում, բայց, այնուամենայնիվ, Թումանյանի ճիշտ ընկալմամբ զրանք մի ամբողջություն են և միմյանցից չեն տրոհվում, թեպետ այդպիսի կառուցվածքները այժմ հնացած են և խիստ գեղջկական են հնչում:

Այս տիպի կառուցվածքը ունեցող նպատակային երկրորդական նախադասությունները, շնորհիվ անշաղկապ կառուցման, ժողովրդական խոսքի մեջ նույնպես իրենց գերիշխող զխավոր նախադասության հետ մի ամբողջություն են կազմում, սակայն նպատակային նախադասությունները իրենց իմաստային ու շարահյուսական կողմով ավելի են ընդգծվում իբրև կախյալ, բայց առանձին միավորներ, ուստի Թումանյանը զրանք տրոհում է բութով: Օրինակ՝ Վազում են՝ բռնեն իգիթ Սաֆուին: Ինձ մոտ արի՝ ձվածեղ անեմ... Ինձ մոտ արի՝ բլիթ տամ: Մի ժառանգ ունեմ՝ իմ անցման ետև Իմ քուրը կապի, Սասունը պահպանի:

Նախադասության վերոհիշյալ տիպերի թումանյանական կենտադրական սկզբունքները սրանք են, սակայն չեն բացառվում այս կարգի նախադասությունների այլաձև տրոհումները, որոնք ժամանակի կենտադրության տարբերայնության արդյունք են: Այսպես, օրինակ՝ Մին էլ տեսնում է՝ հեռվում ծառերի արանքից մի կրակ է փայլվում: Ինչ մի ասիլ՝ դարձյալ թռչուններ կերել են: Աղբիկը մնում է տարակուսած, չի իմանում՝ որ կողմը գնա: Ասում է՝ Երազի մեջ եմ երևի: Ըստ Թումանյանի կենտադրական սկզբունքների՝ տեսնում է, դու մի ասիլ, իմանում, ասում զխավոր նախադասությունների վրա բութ չպետք է լիներ:

Թումանյանը ժողովրդական խոսքի ոգուն հավատարիմ մնալով, չի տրոհում նաև բայական հարադրությունները և դրանց մոտեցող կապակցությունները, որքան էլ դրանք ունենան ինքնուրույն նախադասության արժեք՝ իրենց լրացական անկախ շրջապատով ու դրանց առանձնացմանը նպաստող այլ հանգամանքներով, օրինակ՝ Ուրախանում աշխատեցի մին էլ լինում, առնում տուն է բերում: Որ կշտանում է պրծնում,— Բա ես հոգնած եմ,— ասում է: Գնում է ուսնում մի տնակի: Էնտեղ երևի մաղիկ էն ապրում, զնամ նրանց մոտ մնամ էս գիշեր,— մտածում է աղբիկը:

Թումանյանը լեզվական իր խոր զգացողությամբ, ճիշտ ու առողջ մոտեցումով լուծում էր մեր կենտադրության միևնույն իսկ այսօր էլ դեռևս վերջնականորեն չլուծված բարդ հարցերը՝ հոգուտ ժողովրդական խոսքարվեստի նա չէր տրոհում նաև քե, որ շաղկապներով կապակցվող կրկնությունները, որոնք դիտվում են իբրև մի բառական ամբողջություն: Օրինակ՝ Կախարդ ուր կախարդ. հենց մի տեսնելով կախարդում է նրան: Ոչ, չի լինելու որ չի լինելու: Շատ է մնում քե քիչ, էդ էլ չի իմանում:

Թե չէ եղանակավորիչ բառակապակցությունը և քե չէ բաղադրյալ հակադրական շաղկապը հաճախ շփոթվում են միմյանց հետ: Թումանյանը զրանք ստույգ կերպով տարբերակում է և վերջընթեր եղանակավորիչ քե չէ-ն միշտ հարում է նախադասությանը առանց որևէ տրոհման, իսկ հակադրական քե չէ-ն անպայման տրոհվում է և միացնում է հաջորդ նախադասությանը: Օրինակ՝ Հը. գոհ ես քե չէ: Հերը ներս է մտնում քե չէ, հոտոտում է ու կանչում: Այսպիսի քե չէ-ն առաջացել է նույն հակադրական քե չէ-ից ժխտական կրկնությամբ. կրկնության մյուս եզրը ընկել է, և քե չէ շաղկապը դարձել է եղանակավորիչ բառ:

Չափազանց հետաքրքրական կլիներ, եթե Թումանյանը իր վերոհիշյալ կենտադրական սկզբունքներին հավատարիմ ու հետևողական լիներ: Բայց, դժբախտաբար, նկատվում են շեղումներ ու տատանումներ: Օրինակ՝ էստեղ քաղավորը տեղիցը վեր է թռչում՝ աղաղակում: Մաղիկն ասած ուտում՝ խմում են: Այս օրինակների մեջ բութի կիրառությունը ըստ Թումանյանի կենտադրության ընդհանուր սկզբունքի՝ ավելորդ է: Համեմատիր. Մեկ էլ տեսա՛ր մի սաբի ուսից տարածվեց մի գիլ, առածգական ձայն:

Բազմազան է ուրիշի ուղղակի խոսքի կետադրությունը Թումանյանի զրվածքներում: Եթե առսկ թվարկենք, ապա կստանանք հետևյալ պատկերը.

ա) Ուղղակի խոսքից առաջ օգտագործում է ստորակետ ու գիծ, իսկ ուղղակի խոսքը վերջավորում է չակերտների մեջ. օրինակ՝

Մի ամսից հետո վերադարձան տուն

Գովելով նրա արարքի նսրայիկ.—

«Հալալ է տղին,— այ իգիտություն.

Ահա քե ինչպես կփախցնեն աղջիկ» (Թ., Բ, 1809, էջ 28):

բ) Միջակետ ու գիծ, և ուղղակի խոսքը առնվում է չակերտների մեջ:

Սկսեց փրփրած քֆել—անիծել.—

«Ինուս զնա, իորի, ա՛յ լիր, անգգամ,

Սև ու սուգ լինի քսող ու պսակրդ՝ (Թ., Բ, 1890, էջ 28):

դ) Միայն միջակետ և ուղղակի խոսքը առնվում է չակերտների մեջ:

Խոսաց ղողալով, իրան կորցրած.

«Իմ կամֆով փախա... սիրում եմ, տերտեր...

Ձե՛ որ ասացիր մեզ կպսակես...» (էջ 31, նույն տեղում):

դ) Միայն գիծ և չակերտներ:

Գունատված հարցրեց գյուղացիներին—

«Այնտեղ չհասա՞վ ձայնն հրացանի» (նույն տեղում, էջ 31):

ե) Հեղինակային խոսքը առանց տրոհության նշանի, իսկ ուրիշի ուղղակի խոսքը՝ չակերտների մեջ.

Իվ կանչում է «արի. Անուշ,

Արի տանեմ յարիդ մոտ» (Թ., Բ, 1890, էջ 39):

զ) Միայն ստորակետ ու չակերտներ:

Կարծես մի կրծքից ողջ միաբերան

Բացականչեցին ձայնով տրամուրան.

«Ա՛յ ափսոս իգիթ. ու կորավ իգուր...

Անո՛ւշ, Անո՛ւշ, ջուր հասցրեմ, ջո՛ւր» (նույն տեղում, էջ 31):

Իրր ուրիշի ուղղակի խոսքը միջամտվում է հեղինակային խոսքով. Թումանյանն այն առանձնացնում է ստորակետներով: Դա վերաբերում է հատկապես ասել բային. օրինակ՝

— Թող զա, ասում էր, ու բռնենք նորից (Թ., Բ, 1890, էջ 34):

— Հայրիկ, ասում է, գիշերս մոռս հոգին, երազ եկավ ինձ (Թ., Բ, 1908, էջ 245):

Թումանյանական կետադրության մեջ նկատվում է և մի ուշագրավ երևույթ ևս: Նա հաճախ հեղինակային խոսքի մեջ ասացական բայը զեղչում է և ուրիշի անուղղակի խոսքի քն շաղկապը կիրառում ասացական բայի փոխարեն, այսինքն՝ մի տեսակ տեղափոխություն է կատարում, շաղկապը ուրիշի անուղղակի խոսքից անցնում է հեղինակի խոսքի քնագավառը և ստանում է զեղչված բայի գործառնություն, անուղղակի խոսքը դառնում է ուղղակի խոսք: Շարահյուսական ձևափոխական այս կենդանի տեղաշարժը հատուկ է ժողովրդական խոսքին, իսկ Թումանյանը կապակցման այդ ձևը մշակել է հրաշալի արտահայտչությամբ՝ միշտ քն-ի վրա բուր ղնելով: Օրինակ՝ Արի զնանք ուրի: Թե՛ ղնանք (Թ., Մարդակերի աղջիկը, 1913, էջ 3):

Հետև իլ միներ քե՛

— Իղոց, դու ինձ բոքում ես:

Մյուսը քե՛

— Շաղափ, մագերու մի ֆաշի:

Երբորդր քե՛

— Ինու, էս ի՞նչ արի, շրեբիս վրա քափեցիր (նույն տեղում, էջ 12):

Մի օր սա եկավ քե՛ շոբան Ջատին ոչխարը քաֆուն իմ հանդն է ֆաշել

(Թ., Ընտիր գրվածքներ, 1929, էջ 51):

Հետագա զարգացման աստիճանը այն է, որ դեռևս լրիվ ուղղակի խոսքի չվերածված՝ անուղղակի խոսքը ամբողջապես ուղղակի է դառնում միայն կետադրության շնորհիվ: Բուրով տրոհվելիս դեռևս որոշ կապ նկատում ենք քե-ի և խոսքի այն հատվածի միջև, որից նա անջատվել է:

Երբեմն Թումանյանը այդ քե-ն տրոհում է ոչ թե բուրով, այլ միջակետով: Այս դեպքում արդեն ստացվում է լիակատար ուղղակի խոսքի կապակցման հարաբերություն, ժողովրդական խոսքի այդ ձևը Թումանյանը մի աստիճանով առաջ է տանում, «դրականացնում» է. օրինակ՝

— Ձերդ մեծություն,— խնդրում եմ աղատեցե՛մ իմ նաղափին:

Թագավորը թե.

— Ինչպե՞ս ազատեմ:

Վարպետը թե. ... և այլն (Թ., Մարդակերի աղջիկը, 1913, էջ 14):

Բացի բութից և միջակետից, Թումանյանը թե շաղկապից հետո օգտագործում է երբեմն ստորակետը. օրինակ.

Ասում եմ թե, կար մի իշխան. Մի մեծ իշխան. էն՛հան ու՛մեղ. Ուր թե մարդիկ նրա աշխու՛մ՝ Թե հասարակ հան՛ն ու մժեղ (Թ., Բ, 1908, էջ 107):

Այս նախադասության մեջ էլ կետադրական նշանը՝ ստորակետը, դրել է թե շաղկապից հետո՝ ասում եմ թե: Այս դեպքում Թումանյանի կետադրությունը ավելի հետեողական է, քան երբ հեղինակային խոսքի ասացական բայը չի զեղչված: Վերջին պարագայում մեկ ստորակետը թե-ից առաջ է դրվում, մեկը հետո. օրինակ՝

Ասել էին. թե. երբ զանգը տալիս եմ, զնա տեսնի՝ ով կա, ինչ է ուղում (Թ., Գիքորը, 1907, էջ 8):

Նույնանման օրինակներում Թումանյանը երբեմն բութ է օգտագործում, երբեմն միջակետ, երբեմն էլ վերջակետ:

Ուրիշի ուղղակի խոսքից առաջ, ինչպես նաև նրա մեջ կիրառած կետադրական նշանների բաղմազանությունը արդյունք է այն անորոշությանն ու անկանոնությանը, որ յուրահատուկ է եղել մեր լեզվի կետադրությանը այդ ժամանակ:

Հայերեն դրական լեզվում շեշտն ընկնում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, սակայն մեր կենդանի, խոսակցական լեզուն երբեմն չի ենթարկվում այդ կանոնին, և Թումանյանը իրավունք չէր համարում զրկելու մեր լեզուն հնչարտաբերական բաղմազանությունից:

Աշխարհաբարը, որ իր բառապաշարի համալրումը կատարեց մեծ մասամբ արարատյան խոսվածքներից, շեշտադրության բնագավառում հետևեց դրաբարին: Ընդունելով մեր դրական լեզվի շեշտադրությունը, մեր դրողները, սակայն, չկարողացան հրաժարվել կենդանի լեզվի խոսուն ելեղներից:

Սյունիքում, լոռիում, քանաքեռում, Արարատյան շատ խոսվածքներում շեշտը կենդանի խոսակցական լեզվում ընկնում է նախավերջին վանկի վրա: Թումանյանը հաճախ նկատի է առնում կենդանի խոսքի այդ շեշտադրությունը:

Նրա վաղ շրջանի ստեղծագործություններում գործում է դրական հայերենի շեշտը: Դա բացատրվում է այն ազդեցությամբ, որ նա կրել է «Հուսիսափալից», իսկ «Հուսիսափայլը» անշեղորեն կիրառել է դրաբարի շեշտադրությունը:

Այդ նույն բանը չենք կարող ասել 1908 թվականին լույս ընծայած բանաստեղծությունների մասին, ուր զղացվում է ժողովրդական խոսակցական լեզվի կենդանի շեշտադրությունը. օրինակ՝

— Զի՛տեմ, մայրի՛կ, ինչու էսպես. բուն չի զալիս աշխե՛րիս (Թ., Բ, 1908, էջ 215):

Համբարձում յա՛յլա, Յայլա ջան, յա՛յլա, Սար-յաբեբ, յա՛յլա, Յայլա օան յա՛յլա (նույն տեղում, էջ 131):

Այստեղ յայլա ժողովրդական բառի առաջին վանկն է շեշտված, ինչպես որ մի քիչ վերև նույն ձևով շեշտ ունի յիտեմ բայը:

— Քո ոտի հողն եմ, Մո՛սի ջան, Մո՛սի (նույն տեղում, էջ 134):

— Էս սիրտս հովացնում չի դե՛ղի... Ես մեր աղբրի ստոր ջրիցն եմ ուզում, դե՛ղի... Ես մեր տունն եմ գնում... Ես իմ նանին եմ ուղում (Թ., Գիքորը, 1907, էջ 15):

Դիվիսն առավ ու մի գիշեր Հա՛յդե կորավ. էն կորչելն Լ.ր... (Թ., Բ, 1908, էջ 67):

Այս օրինակներում բառերի վերջընթեր վանկերն են շեշտված: Ոմանք կարող են պնդել, որ սա բարբառային ձև է, սակայն դրանով Թումանյանը ցուցադրել է մեր կենդանի խոսքի շեշտադրական բաղմազանությունը և հնչերանդային հնարավորությունները և կենդանի շունչ հաղորդել դրական լեզվի շեշտադրական միատարրությանը:

Եզրակացնենք. Թումանյանի դրվածքների տարածն կետադրությունը կապվում է նրա ժողովրդական ղեղարվեստական խոսքի սեղմության, ճկունության, արագ շրջադարձումների անշաղկապ միավորումների, տարբեր ձևերի իմաստային սերտության ու մոտիկության հետ, որոնք ամեն պարագայում բանաստեղծին կետադրական տարբեր լուծումներ են թելադրել: Իսկ նրա գիտական, հրապարակախոսական խոսքի մեջ այդ տարբերությունները չենք նկատում: Այս դեպքում նա խոսքը մշակում է ըստ դրական լեզվի կետադրության օրենքների, կետադրական կանոնների պահանջների համեմատ: Իժվար է ասել, թե ինչպես կվարվեր նա այսօր, եթե ինքը

հրատարակելու զրգովները. հավանորեն իր որոշ կետադրական անհետևողությունները կվերանայնելու ըստ մեր լեզվի այսօրվա ընդունած սկզբունքների, իսկ, զուգահեռ, կետադրական որոշ թելադրանքներ էլ ինքր անելու, լեզվի կենդանի շունչն ու հողին ըմբռնելու իր հանճարով:

Եվ այսօր էլ, մեր կարծիքով, հայերենի կետադրության վերջնական կանոնավորման ու միասնականացման այս պահին անկարելի է հաշվի չառնել Քրոմանյանի ժողովրդական խոսքի կետադրության որոշ սկզբունքներ, որոնք դործադրելի կլինեն հակիրճ ու ամփոփ այնպիսի խոսքի մեջ, որպիսին մշակվում է ժամանակակից արձակ գրվածքներում. մի արձակ, որ, ճիշտ է, իր բառակազմով ու քերականական մշակումով զանազանվում է թրմանյանական խոսքից, բայց ոճաբանական իր ընդհանուր նկարագրով, անծավալայնությունով, ամփոփ բանաձևվածներով ու ինքնուրույն ավարտվածությամբ շատ է նմանվում թրմանյանական խոսքին: Այդպիսի խոսքի համար դասական կետադրական կանոնները կարող են շատ լայն դալ:

ПУНКТУАЦИОННЫЕ ПРИНЦИПЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ ТУМАНЯНА

Э. Б. БАГДАСАРЯН

Р е з ю м е

В настоящей статье анализируются пунктуационные принципы в произведениях О. Туманяна. Анализ увязан с общим состоянием пунктуационной системы армянского литературного языка указанного периода, а также с существующей в то время грамматической канонизацией. Применение различных пунктуационных систем в различных произведениях писателя и заметные отклонения от «средних» норм литературного языка объясняются особенностями его художественного слова, близостью его языкового мышления к народному, отличающемуся сжатостью, гибкостью, образностью. Своеобразие художественного материала подсказывало писателю выбор той или иной системы пунктуации.